

ԳԼՈՒԽ 3. Պետական վիճակագրություն իրականացնող մարմնի և վարչական վիճակագրություն իրականացնող մարմինների իրավունքները և պարտականությունները

Հոդված 15. Պետական վիճակագրություն իրականացնող մարմնի իրավունքները

Պետական վիճակագրություն իրականացնող մարմինն իր իրավասության սահմաններում իրավունք ունի՝

ա) ստանալ հավաստի վիճակագրական տվյալներ վիճակագրական տեղեկություններ տրամադրողներից՝ օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով.

բ) պայմանագրային հիմունքներով վիճակագրական տեղեկություններ տրամադրողներից ստանալ անհրաժեշտ վիճակագրական տվյալներ, այդ թվում քաղաքացիներից՝ նրանց սոցիալ-ժողովրդագրական վիճակի, ինչպես նաև տնային տնտեսությունների վերաբերյալ.

գ) պատրաստել ու ներկայացնել համապատասխան եզրակացություններ և առաջարկություններ սոցիալ-տնտեսական և ժողովրդագրական գործընթացների վերլուծության հիման վրա.

դ) պարզաբանել վիճակագրական տեղեկատվության և տվյալների ոչ ճիշտ օգտագործման և մեկնաբանման դեպքերը.

ե) ներդնել վիճակագրական տեղեկություններ ստանալու համար Խորհրդի կողմից հաստատված վիճակագրական հաշվետվությունների ձևերը.

զ) վիճակագրական փաստաթղթերում արտացոլված տվյալների, տեղեկությունների (սկզբնական կամ ամփոփ ձևով) արժանահավատությունը, ամբողջականությունը և տվյալների հաշվարկման կարգի պահպանումը ապահովելու նպատակով սահմանված կարգով իրականացնել ստուգումներ, խախտումների հայտնաբերման դեպքում դրանց վերացման նպատակով տալ անհրաժեշտ հրահանգներ և մտցնել համապատասխան ուղղումներ սկզբնական և ամփոփ վիճակագրական տվյալներում.

է) անցկացնել փորձաքննություն վիճակագրության և հաշվառման հարցերի վերաբերյալ.

ը) Ծրագրից դուրս պայմանագրային հիմունքներով մատուցել վիճակագրական, վերլուծական, տեղեկատվական, հրատարակչական և կանոնադրությամբ նախատեսված այլ ծառայություններ՝ օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով.

թ) ընդունել վիճակագրական աշխատանքների իրականացման և սույն օրենքի 14 հոդվածի 2-րդ մասում նշված փաստաթղթերի ձևերի լրացման հետ կապված սույն օրենքով և այլ իրավական ակտերով նախատեսված գերատեսչական նորմատիվ իրավական ակտեր.

ժ) կնքել համագործակցության պայմանագրեր այլ պետությունների վիճակագրություն իրականացնող մարմնի և միջազգային վիճակագրական կազմակերպությունների հետ՝ օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով:

Հոդված 16. Պետական վիճակագրություն իրականացնող մարմնի պարտականությունները

Պետական վիճակագրություն իրականացնող մարմինը պարտավոր է՝

ա) կազմակերպել Ծրագրով նախատեսված աշխատանքների կատարումը.

բ) Հայաստանի Հանրապետության նախագահին, կառավարությանը, Ազգային Ժողովին, ինչպես նաև Ծրագրով սահմանված այլ պետական մարմիններին ապահովել երկրի տնտեսական, սոցիալական, ժողովրդագրական և բնապահպանական իրավիճակի վերաբերյալ տեղեկատվությամբ Ծրագրով նախատեսված կարգով.

գ) ապահովել պետական ամփոփ վիճակագրական տեղեկատվության մատչելիությունը.

դ) պահպանել հավաքագրված վիճակագրական տվյալների անանունությունը.

ե) չհրապարակել և չտարածել սկզբնական վիճակագրական տեղեկությունները.

զ) իրավաբանական անձի, պետական հիմնարկի կամ քաղաքացու դիմումով տրամադրել տվյալների բանկում գտնվող նրանց վերաբերյալ տեղեկություններ.

է) պետական վիճակագրական տեղեկություններ տրամադրողներին անվճար ապահովել վիճակագրական հաշվետվությունների ձևերով և հրահանգներով, նրանց տեղյակ պահել վիճակագրական հաշվետվությունների ներկայացման ժամկետների, պարբերականության և ներկայացվող պահանջների մասին:

Հոդված 17. Վարչական վիճակագրություն իրականացնող մարմինների իրավունքները

Վարչական վիճակագրություն իրականացնող մարմիններն օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով իրավունք ունեն՝

ա) ստանալ վարչական ռեգիստրների վարման համար անհրաժեշտ տվյալներ և տեղեկություններ իրավաբանական անձանցից, պետական հիմնարկներից և անհատ ձեռնարկատերերից.

բ) հրապարակել իրենց կողմից իրականացված տեղեկատվական գործառույթների (վարչական բնույթի դիտարկումների) արդյունքները՝ նշելով սկզբնաղբյուրը:

Հոդված 18. Վարչական վիճակագրություն իրականացնող մարմինների պարտականությունները

Վարչական վիճակագրություն իրականացնող մարմինները պարտավոր են դիտարկումների և այլ աշխատանքների իրականացման ժամանակ պահպանել օրենսդրության պահանջները: